ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ

МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru.

09.11.2011թ.
թիվ 221

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011թվականի նոյեմբերի 03-ին կայացած թիվ 12 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 5/հինգ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10653-11
«09» 11 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնքի,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1
հեռախոս (0231)6-00-25,էլ. փոստ
gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

03 նոյեմբերի 2011 թվականի N 12 նիստի N 01

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 03-ի N 12 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

ՅՈՒՐԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՋՈՒԽՇՈՒՂՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի
03 -ի N 12 արտահերթ նիստի N 01 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 03 -Ի N 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

## ՕՐԱԿԱՐԳԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի հաստատման մասին:

Զեկ.՝ Լ. Գրիգորյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 09-ի N 10 նիստի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

Զեկ.՝ Լ. Գրիգորյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ պատուհանները փոխելու աշխատանքների կատարման պայմանների մասին:

Զեկ.՝ Լ. Գրիգորյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի սեփականություն համարվող բնակելի տարածությունը անհատույց, սեփականության իրավունքով նվիրատվությամբ հանձնելու մասին:

Զեկ.՝ Լ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1
հեռախոս (0231)6-00-25,էլ. փոստ
gyuxmerdzavan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

03 նոյեմբերի 2011 թվականի N 12 նիստի N 02 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 10 ՆԻՍՏԻ N 04-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբեիր 09-ի N10 նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 04-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

1) Նախատեսված և հաստատված հոդվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածով նախատեսված 3,000.0 հազար դրամը (երեք միլիոն) ուղղել 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածին:

բ. 08 բաժնի 3-րդ խմբի 1-ին դասի 4234 հոդվածով նախատեսված 300.0 հազար դրամը (երեք հարյուր) ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածին:

գ. 08 բաժնի 2-րդ խմբի 4-րդ դասի 4239 հոդվածով նախատեսվածից 200.0 հազար դրամը (երկու հարյուր) ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

ՅՈՒՐԻԿ ՏՈՆՈՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՀՐԱՉԻԿ ՋՈՒՄՇՈՒԴՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1
հեռախոս (0231)6-00-25,էլ. փոստ
gyuxmerdzavan@mail.ru.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2011 թվականի N 12 նիստի N 03

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետով և 5-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ 1-ին մասնաշենքի 3-րդ հարկի պատուհանների փոխման աշխատանքները իրականացնելու նպատակով՝ թույլատրել համայնքի ղեկավարին կատարել գնում բանակցային ընթացակարգ, առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին (Լ. Գրիգորյան)՝ գնված պատուհանները, օրենքով սահմանված կարգով, նվիրաբերել Մերձավանի գյուղական համայնքի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ :
3. Համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

ՅՈՒՐԻԿ ՏՈՆՈՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՀՐԱՉԻԿ ՋՈՒՄՇՈՒԴՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1
հեռախոս (0231)6-00-25,էլ. փոստ
gyuxmerdzavan@mail.ru.

# ՈՐՈՇՈՒՄ

03 նոյեմբերի 2011 թվականի N 12 նիստի N 04

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 01/10/3515-11 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի հաշվեկշռում հաշվառված Երևանյան խճուղի թիվ 65 շենքի N 36 բնակարանային ֆոնդի 115.9 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը անհատույց սեփականության իրավունքով նվիրատվությամբ հանձնել համայնքի բնակիչ Սերյոժա Մկրտչյանին:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին (Լ. Գրիգորյան)՝ օրենքով սահմանված կարգով կնքելու անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

3. Համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

ՅՈՒՐԻԿ ՏՈՆՈՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՀՐԱՉԻԿ ՋՈՒՄՃՈՒԴՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ